



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱՌԵՎՏՐԱԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ  
ՊԱԼԱՏ

# Դիրքորոշման փաստաթուղթ

15. 07. 2022

## Երիտասարդ գործարարների շրջանում առկա խնդիրները

Ներկայիս աշխարհաքաղաքական պայմաններում, երբ երկրները բախվում են բազմազան դժվարությունների և մարտահրավերների երիտասարդ ձեռնարկատերերի դերը կարևորվում է առավել քան երբևէ: Հատկապես մարզերում գործող երիտասարդ գործարարները, որոնք բացի բիզնեսի ամենօրյա խնդիրներից բախվում են նաև անվտանգային խնդիրների կարիք ունեն ավելի շատ ուշադրության և աջակցության:

Հաշվի առնելով վերոգրյալը և հավատարիմ մնալով պալտների մանդատին ՀՀ առևտրաարդյունաբերական պալատը վերջին ամիսներին Վայոց Ձորի և Շիրակի մարզերի երիտասարդ գործարարների շրջանում կազմակերպել էր ֆոկուս խմբային քննարկումներ «Երիտասարդ գործարարների շրջանում առկա խնդիրները» թեմայով: Մարզային քննարկումների արդյունքների հիման վրա ՀՀ առևտրաարդյունաբերական պալատը ամփոփել է մասնակիցների կողմից հնչեցրած խնդիրները: Ստորև ներկայացնում ենք դրանք, յուրաքանչյուր խնդրի համար ներկայացնելով համապատասխան առաջարկություններ:

## 1. Մասնագետների սակավություն և հմտությունների անհամապատասխանություն

Հայաստանյան աշխատաշուկան բնութագրվում է որպես գործազրկության բարձր մակարդակով և միաժամանակ որոշակի ոլորտներում որակյալ աշխատուժի խիստ պակասով աշխատաշուկա: Զննարկումներին մասնակցած գործարարների պելի քան 90%-ը, որպես իր կազմակերպության համար առաջնահերթ խնդիր նշում էր որակյալ մասնագետների պակասը կամ առհասարակ բացակայությունը: Այս համատեքստում առաջ քաշված խնդիրն իրական մարտահրավեր է թե՛ գործատուների, թե՛ աշխատակիցների և թե՛ քաղաքականություն մշակողների համար: Հմտությունների անհամապատասխանությունն անշուշտ ունի իր օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառները, սակայն անկախ պատճառներից, այն բացասաբար է ազդում ՄՓՄՁ-ների արտադրողականության, մրցունակության և վերջնարդյունքում տնտեսական աճի վրա: Մասնավորապես մեր օրինակում մարզերի երիտասարդ գործարարների կողմից նշվում էին կաշեգործության, կոշկակարության, քիմիական արդյունաբերության, հյուրընկալության, բժշկության, վաճառքի, մարկետինգի և զբոսաշրջության ոլորտներում մասնագետների սակավությունը և հմտությունների անհամապատասխանությունը: Գործարար համայնքը կարծում է, որ խնդիրը լուծում կարող է ստանալ միայն պետություն-մասնավոր հատված արդյունավետ համագործակցության արդյունքում:

### Առաջարկություն

Քանի որ մասնավոր հատվածի ներկայացուցիչները պատրաստ են ներգրավվել ուսուցման գործընթացում տարբեր ձևաչափերով, իսկ կառավարությունը որդեգրել է ՄԿՈՒ համակարգում աշխատանքի վրա հիմնված ուսումնառության զարգացման քաղաքականությունը, առաջարկում ենք քննարկել ինստիտուցիոնալ համագործակցության հնարավորությունները, որտեղ մասնավոր հատվածի ներկայացուցիչների, պետական հատվածի և սոցիալական գործընկերների, գիտահետազոտական կենտրոնների, վերապատրաստման կենտրոնների և այլ շահագրգիռ կառույցների ներգրավվածությունը առավել բարձր կլինի, իսկ ներկայումս առկա գործիքակազմերը կթարմացվեն և կհամալրվեն՝ հիմնվելով միջազգային լավագույն փորձի վրա: Հայաստանում աշխատանքի վրա հիմնված ուսուցման պրակտիկան կիրառվում է առանձին ոլորտներում, սակայն դրանց քանակը բավարար չէ երկարաժամկետ և կայուն արդյունք ստանալու համար: Պալատը պատրաստ է նախաձեռնել նման հանդիպումների կազմակերպումը, եթե պետական հատվածի ներկայացուցիչները կառուցողական քննարկումների պատրաստակամություն հայտնեն:

## 2. Աշխատակիցների հոսունության խնդիր

Քննարկումներին ներգրավված գործարարների շուրջ 80%-ի մոտ թվով երկրորդ խնդիր/ մարտահրավերը աշխատակիցների հոսունությունն է: Ներկայումս դժվար է ստանալ ճշգրիտ տեղեկատվություն աշխատակիցների հոսունության պատճառների վերաբերյալ այն դեպքում, երբ աշխատակիցները դժվարությամբ են բարձրաձայնում ընկերությունից հեռանալու պլանների մասին: Մարզերում երիտասարդ գործարար համայնքը մտահոգություն ունի, որ աշխատակիցների բարձր հոսունությունը հիմնականում պայմանավորված է մայրաքաղաք գնալու և այնտեղ աշխատանք գտնելու մտադրությամբ: Այս դեպքում, երբ գործատուն ժամանակ ու ռեսուրս է ծախսում աշխատակիցներին վերապատրաստելու և մասնագիտական կարողությունները զարգացնելու համար, իսկ աշխատակիցը այս կամ այն պատճառով լքում է ընկերությունը գործատուները զգալի վնասներ են կրում:

### Առաջարկություն

Մարզերում կրթական հաստատությունների կարողությունների զարգացումը և գործարար համայնքի պատրաստակամությունը ներգրավվելու աշխատանքի վրա հիմնված ուսումնառության զարգացման ծրագրերում կարող է լուրջ խթան հանդիսանալ նորավարտ երիտասարդներին իրենց մարզերում մնալու և աշխատաշուկայում իրենց տեղը գտնելու հարցում: Ուստի առաջարկում ենք Պետական հատվածի ներկայացուցիչներին հատուկ ուշադրություն դարձնել մարզային կրթական հաստատություններում կրթության որակի ապահովմանը և ուսանողներին և գործարար համայնքին իրազեկել աշխատանքի վրա հիմնված ուսումնառության առավելությունների մասին: Այս համատեքստում Պալատը պատրաստ է կազմակերպել հանդիպումներ գործարար համայնքի հետ և որպես սոցիալական գործընկեր աջակցել ոլորտի զարգացմանը: Ի հավելումն նշենք, որ Պալատը խրախուսում է աշխատանքային օրենսգրքի փոփոխություններով նախատեսված այն դրույթը, որով գործատուն հնարավորություն կունենա աշխատանքային պայմանագրում ֆիքսել, որ աշխատակիցը, վերապատրաստումից հետո որոշակի ժամանակահատված, պարտավոր է մնալ ընկերությունում, այլապես ստիպված կլինի վճարել վերապատրաստման համար վճարված գումարը կամ որաշակի տոկոս դրանից: Պալատն ակնկալում է այս փոփոխությունների հնարավորինս սեղմ ժամկետներում ընդունում և գործարկում:

### 3. Ֆինանսական ռեսուրսների հասանելիություն

Մարզերում երիտասարդ գործարարների կարևորագույն խնդիրներից հաջորդը ֆինանսական միջոցների հասանելիությունն է: Ճիշտ է, ներկայումս կան բազմաթիվ պետական, ինչպես նաև միջազգային և տեղական դոնոր կազմակերպություններ, որոնք այս կամ այն չափով փորձում են աջակցել մարզաբնակ երիտասարդ գործարարներին՝ ֆինանսական ռեսուրսներ հայթհայթելու հետ կապված, այնուամենայնիվ խնդիրն ունի համակարգային լուծման կարիք:

#### Առաջարկություն

Ներկայումս գործարար համայնքի համար լուրջ խնդիր է վարկային երաշխավորությունների հարցը: Հաշվի առնելով, որ Հայաստանում ֆինանսական (վարկային) ռեսուրսների հասանելիության մակարդակի բարձրացման նպատակով իրականացվել է վարկային երաշխավորությունների տրամադրում (նախկինում՝ ՓՄՁ ՋԱԿ-ի կողմից), առաջարկում ենք կիրառելով կուտակված փորձը վերականգնել վարկային երաշխավորությունների տրամադրման ծրագիրը:

Հատկապես արտադրական և արտահանման պոտենցիալ ունեցող կազմակերպությունների համար անհրաժեշտ է ստեղծել առավել բարենպաստ միջավայր, օգտագործելով նաև դոնոր կազմակերպությունների կողմից տրամադրված միջոցները, հատուկ ուշադրություն դարձնելով մարզերին և ուղղորդելով ֆինանսական միջոցները դեպի մարզեր:

#### 4. Թվայնացում

Մրցունակ լինելու ու ժամանակին համահունչ քայլերու կարևոր գրավականը բոլորը նկերությունների համար թվայնացումն է: Թվայնացում ասելով նկատի ենք ունենում տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների համատարած կիրառության և վերջիններիս հենքի վրա ստեղծված նոր լուծումների ազդեցությամբ բիզնեսում տեղի ունեցող հիմնարար փոփոխություններ, որոնց արդյունքում փոխվում են բիզնեսի վարման մոտեցումները, նոր արժեքի ստեղծման շղթայի մասնակիցների հարաբերությունները և տնտեսվարման ընդհանուր տրամաբանությունը: Մարզերում գործող բիզնեսները գիտակցելով թվայնացման կարևորությունը իրենց բիզնեսներում մեծ ցանկություն ունեն ներդնելու և կիրառելու դրանք: Սակայն այստեղ գործարարները բախվում են աշխատակիցների դիմադրությանը, ովքեր չեն տիրապետում նոր տեխնոլոգիաներով աշխատելուն և հրաժարվում են դրանցով աշխատելուց: Որոշ դեպքերում խնդիր կա նաև բիզնեսի ղեկավարների շրջանում, որոնք թեև գիտակցում են թվայնացման կարևորությունը, այնուամենայնիվ տեղեկատվության պակաս ունեն և կարծում են որ տեղեկատվական բնույթի հանդիպումները, դասընթացները և/կամ սեմինարները հիմնականում երևանակենտրոն են: Քիչ չեն նաև դեպքերը երբ բիզնեսում առաջնահերթություններ սահմանելիս թվայնացումը մղվում է հետին պլան, մինչդեռ մերօրյա իրականությունում այն բիզնեսի կայուն զարգացման կարևորագույն բաղադրիչներից է:

#### Առաջարկություն

Գործարար համայնքից պարբերաբար եկող ազդակները փաստում են, որ բիզնես համայնքի մի ստվար հատված ընդհանրապես և մարզերի գործարարները հատկապես տեխնիկական աջակցության և կարողությունների զարգացման պակաս ունեն: Սկսնակ գործարարների, ինչպես նաև ավելի փորձառու ընկերությունների ղեկավարների և աշխատակիցների համար դասընթացները և տեխնիկական աջակցությունը սկսած ֆինանսական գրագիտությունից մինչև գործարար ծրագրերի կազմում և դրանց ճիշտ ներկայացում մեծապես կարող է նպաստել բիզնեսի հետագա զարգացմանը: Ուստի ՀՀ առևտրաարդյունաբերական պալատը առաջարկում է նախապես նախանշված ուղղություններով պարբերաբար դասընթացներ իրականացնել մարզում և Երևանում, ներգրավելով համապատասխան մասնագետներ պետական և մասնավոր հատվածից: Պալատների համակարգը պատրաստ է աջակցել տեղեկացվածության մակարդակի բարձրացման ուղղված նախաձեռնություններում և համաձայնության դեպքում նաև կարող է կազմակերպել նման միջոցառումներ մարզերում և Երևանում :

Մարզերի գործարար համայնքի ներկայացուցիչները բարձրաձայնեցին նաև ընդհանուր բնույթի մի շարք հարցեր կապված դոլարի արժեզրկման, Վերին Լարսի անցակետում առաջացող պարբերական խնդիրների, հումքի և ռեսուրսների հասանելիության, ՏԻՄ-երի դերի, հարկային օրենսգրքի որոշակի հոդվածների հետ կապված, որոնք ՀՀ առևտրաարդյունաբերական պալատը ակնկալում է քննարկել պետական հատվածի գործընկերների հետ: